



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱՋԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 2

ԵՐԵՐՇԱԲԹԻ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1907

ԱՐԱՋԱԿԱՐԳ ԲԱՄԱՑՈՅՆԷՐ

ԶԵՆՈՐ

ԱՐԱՋԱԿԱՐԳ ԲԱՄԱՑՈՅՆԷՐ

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉ

Գ. ՍԱՐԳԻՍՈՑ ԵՒ ԸՆԿ.


Պաշտոն-Պարո, Օռոգտի-Պար, հաստատութեան շէնքէմ, Թիւ. 16

(آ. آسادوریان) شرکت مرتبه مطبوعه — باب عالی جاده سنده نو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍԵՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապր-Ալի հաստատութեան շէնքէմ, Թիւ. 52

Հատոր 40 փարսա



Ձեռնի, ուղի ու ուղի եւ ձեռնի
 (փամպուկայն մեխանիկ
 կը գտնուի)

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ ,
 բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ , որովհետեւ լաւ
 մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
 ցանէ , մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
 եւ տաղաւկի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՆ ԿԱՅԺ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է . սոյն մեքենան տմենէն կատարե լազործուածը,
 հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բաւանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ :

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատան մէջ :

ՆԱԿԱՆԱԿԱՆ
 ՄԱՍՆԱԿԱՆ

- | | |
|---------|--|
| ԲԵՐԱ | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի կիսին դէմ . |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը . |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ . |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԵԻԻՏԱՐ | Չարչը Պօյու , թիւ 120 . |

Կատարեալ երախաւորութիւն

Մասնահաշիւեր գաւառներու բոլոր քաղաքներու մէջ :

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա , Մեծ փողոց , թիւ 343 և 343 կրկին , Տիւղօղլուի տունը :




ԱՐԵԻԵԼՔ ՕՐԱՆ

Թերթ ազգային , գրական եւ քաղաքական :
 — Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլ-
 տոյ համար 80 դրուշ , դաւառներու համար
 108 դրշ . և օտար երկիրներու համար 35 ֆր . :
 Ձեռքէ վաճառում՝ քաղաքի փարա : Հասցէ՝
 Ղալաթիա , Բամանսօ փողոց : ԱՐԵԻԵԼՔ
 հրա լարակ կ'իլլէ ամէն օր , կէս օրին , խը-
 նաճեալ բովանդակութեամբ , ընտիր յօդուած-
 ներով , թարմ լուրերով ու նորագոյն տեղե-
 կութիւններով :

ԱՐԵԻԵԼՔ , իր վերակազմուած խմ-
 բագրութեամբ և իր կարող աշխատակիցնե-

րով , առաջնակարգ տեղ մը կը զբաւէ տե-
 դական հայ մամուլին մէջ , օր աւուր տեղի
 նրապուրիչ դառնայով՝ նորանոր բարեփոխ-
 անքու շնորհիւ զորս ներմուծած է թերթին
 մէջ : Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏ-
 ԿԵՐԱԶՍԱՐԴ ըլլալու հանգամանքը , որով իր
 ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերա-
 բար : Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսա-
 բաններ : Ոչ նուազ կը գնահատուին իր մաս-
 նագիրական յօդուածները , և կեղեցական ,
 կրօնական , անտեսական-սեղանաւորական ,
 երկրագործական , իրաւաբանական եւ այլն ,
 բաց ի գրական , բանասիրական գրուածքնե-
 րէ , օրուան տեսութիւններէ ու Զուարթ նօ-
 թերէ , որոնք նիւթերու ճոխ պէսպիսութիւն
 մը կը կազմեն :



ՏԱՐԵԴԱՐԶ ԾՆՆԴԵԱՆ ՂԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԽԱՆԻ

ՕԳՈՍՏԱՓԱՌ ԻՆԴՆԱԿԱԼԻՆ ՀԱՄԱՅՆ ԹՈՒՐԻՌՈՅ

Թուրքիոյ ընդարձակածաւալ Կայսրութեան բոլոր հպատակներն , ցնծո-
րեալք որքի կը տօնեն բարեբաւսիկ Տարեդարձն Ծննդեան , մեր

ՕԳՈՍՏԱՓԱՌ ՎԵՀԱՊԵՏԻՆ

ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԽԱՆԻ

Բովանդակ Կայսրութեան մէջ ապրող ամէն անհաս՝ անգամ մը եւս իր
արտաբողոքի աղօթքն ու մաղբանքը կը բարձրացնէ առ Աստուած , վասն արեւշա-
տութեան քանկագին կենաց Նորին Կայսերական Վեհափառութեան , Որուն
անսպասելի խնայութեամբ , հայրախնամ ոգով , բարեգործեալք եւ հպատակա-
ւորութեամբ բովանդակ Թուրքիան բարգաւաճումս ու բարեգործումս է :

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ , բարգոնան հանդիսանալով բոլոր հաւատարիմ հպատակաց
արտաբողոքի զգացումներուն , արագին աղօթքը կը բարձրացնէ առ Աստուած ,
ջերմագինս կրկնելով՝

ԿԵՅՅԷ ՅԱԻԵՐԸ ԿԵՅՅԷ

ՂԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼՀԱՄԻՏ Բ. ԽԱՆ

ՕԳՈՍՏԱՓԱՌ ՎԵՀԱՊԵՏՆ ՄԵՐ

ՕՍԽԱՆԵԱՆ ՄԵՐ ՊԵՏՈՒԹԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 2

ԵՐԵՎԱՆԻ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1907

ԹԷ ԻՆՉՈՒ ԶԵՆ ԱՄՈՒՍՆԱՆԱՐ...

Օրուան էն կարեւոր հարցն է այս ընտանեկան այն չըջանալիներուն մէջ, ուր բազմաթիւ երիտասարդներ ու երիտասարդուհիներ՝ իրենց բաղդին կ'սպասեն։ Դեռ նորահաս և կամ չատոնց հասունցած, բայց Սուրբ պարանով չը կապուած։

Այսօր լրագիրներուն մէջ, ամուսնալուծութեան լուրերը շատ աւելի ընդարձակ տեղ կը բռնեն, քան Պատրիարքարանի նշանախօսութեան բաժինը. ահա ասոր պատճառը կուզեն գիտնալ մեր բարի մայրերը ու միամիտ հայրերը, երբ խօսակցութեան նիւթը կը պակսի իրենց, եթէ երբեք ունին ճշմարիտ նիւթ մը խօսակցութիւնը ըստելու արժանի, բամբասանքները բացառութիւն համարելով անշուշտ։

Խլավուզ կնիկներուն դարը անցաւ, դժբաժօժիտին անունը միայն մնաց, իսկ երիտասարդ... փնտռուածէն աւելի։ Հրապարակը լեցուն է անոնցմով։ Գացէք Հինգշաբթի առաւօտ մը Ղալաթիոյ եկեղեցին, գա-

ցէք կիրակի առաւօտ մը շոգենաւով Եէնի-Մահալէ, որքան երիտասարդներ պիտի տեսնէք, ամբողջ փունջ մը անոնցմէ, վայելչադէմ, մաքուր հագուած, կրճը կրճը, պատուաւոր, վարկի տէր մարդիկ՝ դերձակին, կօշկակարին և նմաններուն քով, թեթեւ՝ մարմնով չկարծէք, գլխով՝ այդ ալ մութ կը մնայ, բայց գրպանով, ատոր վստահ եղիք։ Հիմակուան երիտասարդները նիւթապաշտ չեն, դրամէ չեն ախորժիր, իսկ քիչէն՝ բնաւ. այդ միտաղը, այնպիսի քանակութեամբ մը պէտք է ըլլայ, որ գրպանուն մէջ ծանր չը կշռէ, և ասոնք ամէնքն ալ քանցիսաներ են և կղած են տարիներէ ի վեր, դպրոցին գրասեղանին վրայէն, իրենց միակ բնաբանը եղած է՝ «Անգամ մը քսան եւ հինգ տարու ըլլայի, հինգ հարիւր ոսկիով աղջիկ մը առնէի, դրամագլուխ ընէի, հարուստ ըլլայի...» և այսպէս անկատար ապառնի շարք մը, իրենց ապագայ հոլովումը անիրականալի. փոխանակ մըտա-

ձեռն և ըսելու. անգամ մը դպրոցէն ելլա-
լի մարդ ըլլայի»։ Մարդ ըլլա՛լ, ա՛յդ ինչ է,
միթէ մարդ չե՛ն հիմայ, հագուստ, գլխարկ,
կօշիկ, գաւազան, ուրի՛շ...։ Չէ՛, այդպէս
չէ՛, մեր պապերը մարդ բառը ուրիշ տեսակ
կ'մըռնէին, ինքնօգնութեան զաւակ ըլլա-
լուն մէջ, դպրոցէն ելլալուն պէս՝ ճակա-
տին քրտինքովը հացին փառա՛ն վաստկելուն
մէջ, և ոչ թէ իրեն հօրը ունեցածին և առ-
նելիք աղջկանը կողմէ տրուած դրամօժիտո-
վը մարդ ըլլալուն մէջ. օր մը, ժամանակ
մը կուգայ, հայրը դրամ չունենար, ու աղ-
ջիկներն ալ դրամօժիտ չեն տար և մեր երի-
տասարդներուն երազած դղեակները օդին
մէջ կը ցնդին, այն ատեն կը զայրանան և
յուսալիսը կ'ըլլան. յանցանքը որո՞ւնն է...։

Բայց ո՛ւր են մեր աղջիկները, անոնք
ի՛նչ կ'ընեն, մարապետանոցներ լեցնելու չափ
աղջիկներ ունինք, ազուրիկ, նուրբ, Գօ-
լէճներէ, Սէօռէրէ, Թաղային վարժարան-
ներէ շրջանաւարտ, երկու երեք լեզու կը
խօսին, Եւրոպացիի հովեր ունին, մէջքեր-
նին բարակ, բարեճեւ, չինծու Եւրոպակա-
նին հետ՝ արեւելեան գեղեցկութիւններով
օժտուած, գրաւիչ նայուածքներ, վարդի
թերթերու պէս կարմիր այտերով, և կամ
չուշանի պէս նուրբ ու փափուկ օրիորդներ,
ամէն դասակարգէ, ընտանեկան պարտէզին
չքնաղ զարդերը՝ որ սակայն կը բուրհնա-
ռանց հոտոտուելու, արեւուն կիզիչ ճառա-
գայթններուն տակ կը գունատին, բուրմունք-
նին կը կորսնցնեն՝ առանց ծառայելու այն
նպատակին՝ որուն համար նախախնամու-
թիւնը իրենք զտեղծեց։

Ինչո՞ւ...։

Դրամօժիտ չունին...։

Իսկ անոնք որ ունին...։

Անոնց ալ յարմար ամուսին մը չկայ...։
Ո՞րն է յարմար ամուսինը, հարուստ պէտք
է ըլլայ, տարիքո՞ւ...։ հոգ չէ, տկարակազմ՝
երբ ամուսնանայ կը բժշկուի. տգե՞ղ...։
էրիկ մարդուն աղուորը չը փնտռուի...։
Դրա՛մ, ԴԻԱՄ, ԴԻԱՄ...։

Բայց ո՞ւն են այդ հարուստ երիտասարդ-
ները, քանի՞ հատ կը ճանչնաք անոնցմէ,
քանի՞ հատ պիտի կրնաք թուել, անոնք
պիտի գոհանան ձեր տուածէն, տասը հա-

լար ոսկիի տէր մարդ մը, որուն անպատճառ
մազը մօրուքը ճերմկցած պիտի ըլլան, եթէ
այդ գուժարը իր աշխատութեանը արդիւնքն
է, հինգ հազարնոց աղջիկ կը փնտռէ, եթէ
ոչ աւելի...։ գեղեցկութիւն, սուսու, ներ-
կայանալի, ասոնք ալ անհրաժեշտ պայման-
ներ ըլլալով. ամուսնութեան ամէնէն աղ-
ուոր տարիքը կ'անցնի, օր մը մարդ մը կը
ներկայանայ, մարդ մը որ իբրեւ թէ իր ապա-
գան չինած է։ Տարիքը՝ մի հարցնէք, երեսին
խորշոմները, դողդոջ քայլերը, ճերմակ մա-
զերը, երիտասարդ երեւնալու գերմարդկա-
յին ճիգերը, անոր ճակտին վրայ՝ յիսուն յի-
սունը հինգ կը գրեն, բառքի է փախցնել
չըլլար, հարուստ է և ձեր քսան տարեկան
աղջիկը կը կապէք անոր, ինչպէս կենդանի
մը՝ լծակին. այդ խեղճ աղջիկը որ գարունն
էր իր տարուք ծնողաց, և ժպիտը ընտա-
նիքին, պիտի քաշէ ու տանի այդ սայլը
կեանքին տիղմին մէջէն, և որչափ յառա-
ջանայ՝ այնքան պիտի խորասուզուի, մին-
չեւ որ այլեւս անոր անիւնները չը դառնան
ու հոն մնայ։ Ահա հիմակուան ամուսնու-
թեւններուն անլուծելի հանելուկը. — վաթ-
սունը հինգ տարեկան մարդ մը՝ երեսուն
տարեկան կին մը և մէկ երկու տկարակազմ
դաւակներ, և սակայն այս երեք տարրին
մէջէն, ամէնէն արգահատելին այդ պղծիկ
աղեկները չե՛ն միթէ, անանկ որ պարզապէս
դոնն են փառամոլութեան համար կնքուած
մուսնութեան մը։ Թողունք քայքայուած
կեանքը երիտասարդ մօրը ու հետեւանքնե-
րը անոր. ձեր աղջիկը հարուստ եղա՛ւ.
բայց ոչ երջանիկ. դրամով դժբաղդուքիւնը
գնեցիք, դրամով աշխարհի մէջ նոր դըժ-
բաղդ արարածներու ծնունդ տուիք, և ո՞վ
է ասոնց պատասխանատուն. — եթէ ոչ ծը-
նողքները, նա մանաւանդ մայրերը։

«Աղջիկս տանը վեց տարու, դպրոցէն
շրջանաւարտ ըլլալուն պէս պիտի կարգուի»
կ'ըսէր, բարեկեցիկ դասակարգէն յարգելի
մայր մը, այն օրիորդին համար որ միեւնոյն
պահուն, սենեակին մէկ անկիւնը, դրասե-
ղանին վրայ՝ դասերը սերտելով զբաղած էր։
Մտածեցի թէ մի գուցէ սխալմամբ քսանը
վեց ըսել ուզեր. որովհետեւ կեանքի օրէնք-
ներէն ա՛մէնէն պարզը և ճշմարիտը սա է

Թէ՛ անցած տարիները բնաւ ետ չեն դառնար: Եւ հիմայ որ դժուարաւ քիչ մը համոզուցանք, և կրցանք ըմբռնել Թէ մեր դարուն մէջ աղջիկներուն տարիքը 14էն վերջ երեք տարին անգամ մը մէկ տարի մը միայն վրայ կը դնէ, և կիները 30ը անցունելէ վերջ՝ հինգ տարին անգամ մը միայն տարի մը կը մեծնան: Խնդրեմ խնայեցէք, և մի ջանաք մեղ հաւատացնել Թէ՛ տարիներն ալ ետ կընան դառնալ. — և դարձեալ միևնոյն մայրը սոսկալի կը հարուածէր այն մարդիքը՝ որոնք ամիսը քսան ոսկիի վաստակ մը չունին և կ'ամուսնանան: Բայց տիկին, դուք ձեր աղջիկը իր եռապատիկ տարիքը ունեցող մարդու մը տալու դադափարը ունիք թերեւս, որովհետեւ հազուադէպ են այն երջանիկ ստեղծուածները, որոնք իրենց քսաներկու և կամ քսանըհինգ տարեկանին մէջ իրենց ճակտին քրտինքով այդպիսի դիրքի մը տէր կարենան ըլլալ: Ինչո՞ւ այս սխալ ըմբռնումը, ինչո՞ւ այս սխալ վարդապետութիւնը, և դաստիարակութիւնը ձեր աղջիկներուն կ'ուտաք: Անոնց անձնասիրութիւնը մեղուցած չէ՞ք ըլլար միթէ երբ անոնք ծախու կը հանէք, ու կուտաք անոնց որ ամէնէն աւելի կը վճարեն այս սիրային աճուրդին մէջ, առանց նկատի առնելու գրեթէ բարոյական և ֆիզիքական յատկութիւնները: Դուք որ ձեր եղունքները թափեցիք անոնց համար, գուրդուրանքով, հոտոտելով մեծցուցիք զանոնք, մեղք չէ՞ն, ինչո՞ւ չէք խնայեր անոնց, ամէն կրօնք Սէր քարոզած է և այնքան սրբացուցած են այդ զգացումը որ՝ Սէրը Աստուած է ըսած են և դուք, այդ սիրոյ աղբիւրն է որ ձեր աղջիկներուն սրտին մէջ ցամքեցնել կը ջանաք փոխանակ արծարծելու, փոխանակ անոնց յարմար՝ իրենց սրտին ընտրած ամուսինին հետ սիրոյ կապով կապուելու: Ու կը զարմանաք Թէ՛ ինչո՞ւ չեն ամուսնանար:

Որովհետեւ չեն հաւնիր, իրենց մօրը իտէալը չեն գտներ. «մենք լեզու գիտենք, դպրոց տեսեր ենք, սալօնի աղջիկ ենք» . այո երիտասարդ մը ցորչափ ամուսին է, սալօնի աղջիկներէն և սալօնի տիկիներէն կ'ախորժի, իրեն օր մը ամուսնանալ որոշէ, այն ատեն Տանտիկին կը փնտռէ և ոչ թէ սալօնի աղջիկ, որովհետեւ իր համեստ տանը մէջ գտնէ առ այժմ սալօն չէ բայց խոհանոց միշտ:

ԷՏՄՕՆ ՍԷՖԷՐ

ՉԷ՛, ՉԵՄ. ՈՒՉԵՐ

[ՖԱՆԹԶԻ]

Կ. ՄԻՆԹ-ԱՆՃԵԱՆԻՆ

- Դործիդ կուգայ, երբ անունն է Վերգինե,
 = Խնդրեմ լըռե, գործիս չի գար վեր գին է
 Չէ՛ չե՛մ ուզեր:
- Հապա եթէ անունն քլայ Արաֆսի,
 = Ո՛չ, այն ասեմ կ'ըլլայ՝ կուտարաւ ասի:
 Չէ՛ չե՛մ ուզեր:
- Է՛յ բեք աղեկ, եթէ կոչեն զայն Արուս,
 = Խօսիդ ես առ, աղջիկը չէ այս դարուս
 Չէ՛ չե՛մ ուզեր:
- Շատ նազիկ է, անունն ալ է Անգիւնազ,
 = Նազիկ ալ է, պիտի բնէ ան քի հազ...
 Չէ՛ չե՛մ ուզեր:
- Միտքս եկաւ, հե՛մ շիրին է՝ Թօրքիւնե,
 = Բե՛հ, անոր ալ սիրուելիք որ դին ե...
 Չէ՛ չե՛մ ուզեր:
- Հե՛մ կուսօլու պօյ պօս տեղը, մեր Մառի,
 = Կարելի՛ չէ, որ ան ինծի յարմարի
 Չէ՛ չե՛մ ուզեր:
- Սեւ աչքերով, սեւ յօնքերով Եպրաֆե
 = Ան ալ ունի, շատ գեշ, ջղային ասի
 Չէ՛ չե՛մ ուզեր:
- Անուններու սով չի կայ, կըլլայ՝ Երան,
 = Անոր քարմուքիւնը ուրիշներ կերան
 Չէ՛ չե՛մ ուզեր:
- Ամմա՛լ քրիւ, շատ լաւ, քող քլայ Թագուկ
 = Ան ալ միշտ շինէ բօփիկներ ասուկ
 Չէ՛ չե՛մ ուզեր:
- Դեղին մազեր, կապոյտ աչքեր, Աղաւնի՞,
 = Վա՛յ վայ, ան ալ խռժած մարդոց կ'հաւնի
 Չէ՛ չե՛մ ուզեր:
- Է՛հ ի՞նչ ըսիր, մեր դիմացի Ելիզին,
 = Ան աչք ունի մեքաֆաւա՛ն Մօթիկ
 Չէ՛ չե՛մ ուզեր:
- Անունը խորք, բայց ինք ալուր Գուրգինե
 = Ան ալ չ'առնէր կարծեմ շատ յագուրդ ինք
 Չէ՛ չե՛մ ուզեր:
- Անուններուն է՛ն աղուոր՝ Պեպրիս,
 = Մուրվախ չ'իջնար, վառե լամբար պեպրիս
 Չէ՛ չե՛մ ուզեր:

Վ. Գ.

ԱՆՔՈՒՄԻՆ ՕՒՅԳԻՐԸ

Տառաներկու տարի վերջը՝ երբ օր մը Սամաթիայի մէջ մէջ փողոցներէն կանցնէի, դրանք սէմը կը չփէր ան՝ պատմա ժուրը շանքոգի մը պէս կարճ, բաց սրունգները կը շարժեր մուրտ տախտակին վրայ, մազերը ցիր ու ցան ու քրտինքը ճակտին:

Որչափ ալ փոխուեր էր Արաքսին:

Արաքսին: Ո՞վ չէր ճանչնար արդեօք Արաքսին, այն սալօնի հուրին, որ ձեռքէ ձեռք կը խլէին: Մաշային աղջկին էր ան գրգ գաշը խաղին մէջ, զոր ձեռքէ ձեռք կ'անցնէին... և որ վերջապէս իմ ձեռքս մընացած էր ասկէ տարիներ առաջ:

Կուզեմ հոս նկարագրել քիչ մը իր ֆիզիքականը՝ այն կարգ մը պապուկ երիտասարդներուն ի պատիւ, որոնք կնկան գեղեցիկը միմիայն քոսն փարսնոց քառթ բոստալներու վրայ կը տեսնան:

Բարեձեւ հասակ մը, որ երբ քովէդ քալէ՝ voyageurի lornietteի պէս քովէդ կախուած չերեւար: Լեցուն մարմին մը, ոչ թէ Խլան Իլանկի չիշերու պէս բամպակներու մէջ, այլ բնական: Չըսեմ ծովերու պէս, բայց թաղար մը ֆէսիլէնի նման մազեր, ճակտին վերեւ փունջ կազմած: Գլխուն վրայ ամէն բան պզտիկ, ինչ որ յարգի է կարծեմ, քիթ, բերան, ականջ, բացի աչուկներէն, որոնք հակառակ ձեւաւոր ըլլալուն՝ կարծես հին և նոր աշխարհները իրենց մէջ պարփակած էին: Վիզէն վա՛ր...:

Ներեցէք, հակառակ երկու տարի շարունակ իր մօտը գտնուելուս, երբեք պատահու թիւնը չունեցայ քննելու զննելու իր այն շնորհները, զորս մարդ իրաւունք կունենայ վայելելու Մեծ «այո» էն ետքը միայն:

Սաանկ հուրի մըն էր Արաքսին:

Հոս չպիտի պատմեմ թէ՛ ինչպէս եղաւ որ ես Արաքսիինը եղայ ու Արաքսին ալ իմս, բայց կուզեմ յիշել ու բացատրել թէ՛

ի՛նչպէս եղաւ որ ես Արաքսիէն բաժնուեցայ ու Արաքսին ալ ինէ:

Իրիկուն մը, ճիշդ ներկայ Սեպտեմբերի զով և լուսնոտ (հիւանդութիւն չի հասկցուի) իրիկուն մը, ինչպէս սովոր էի այցելել իրենց, մայրիկը զիս դիմաւորելով ըսաւ,

— Տղաս, քուկինդ չեա կրնար տեսնալ աս գիշեր, աֆ կընես, քիչ մը տկարութիւն ունի...:

Տեսա՞ք թէ ժամանակին ի՛նչ բարեացակամ մայրիկներ կան եղեր, որոնք իրենց աղջկանը՝ ֆուկինդ ըսելու չափ յառաջ կերթան, առանց սակայն իրենց հուրին՝ իմ կինըս ըլլալու:

Արաքսին հիւանդ... այն Արաքսին որ առաւօտուն կրկին և կրկին ապապրեց որպէս զի չի մոռնամ նախորդ գիշերուն պէզիկէն յաղթուած բաքէթ մը շօթլան...:

Կարելի բան չէր, թուի մը կար գործին մէջ, և այդ թուիւմը, թուիւմով պէտք էր երեւան հանել:

Առողջութիւն մաղթելով՝ գիշեր բարի ըսի ու մեկնեցայ... մինչեւ փողոցին անկիւնը՝ կրկին վերադառնալու համար:

Հացագործին ձիւրը երբ շարաթ մը միւսնոյն տանը առջեւ կենան, կը սովորին և փողոցէն անցած միջոցին՝ կուգան կը կենան, հոգ առանց դրդուելու, բնազդաբար:

Երկու տարի շարունակ յաճախած տանս ո՞ր անկիւնին տեղեակ չէի արդեօք...:

Պարտէզին կողմէն ներս սպրդելով՝ եկայ հաւնոցին մօտ, որուն վրայի սենեակը ճրագ կար: Արաքսիին ամէն օրուան սենեակն էր այդ, ուր կը նստէր իր կարերը կարելու: Բայց զարմանալին հոգ էր որ՝ պիտապատկառ այր մարդու մը շուքը կը տատանէր սթօռին ետեւէն:

Ո՞վ էր, ո՞վ կրնար ըլլալ...: Դէմքը տեսնելը անկարելի էր, սակայն ձայնը լսել,

խօսակցութիւնը իմանալը բան մը ըսել չէր ինծի պէս մէկուն համար, որ ժիմնասթիկի առաջին մրցանակը շահած էի դպրոցը՝ միւսիւ Մուառօն, ականջը խօսի:

Մէկ ոստումով հաւնոցին վրայ էի հիմա, ամբողջ ականջ կտրած (երբեմն մարդ աւանակ ալ ըլլալու է գործին բերմամբ), ներսը կը խօսէին:

Նոյն պահուն գիշերապահին «եանկըն վար» ձայնը խրաչեցնելով բոլոր շուները, ամէնը մէկ սկսան հաչել և անանկ աղմուկ մը հանեցին որ, բաւական ժամանակ բառ մը չի կրցայ հասկնալ: Ու երբ ձայները մեղմացան և կամ աւելի ձիշդը՝ իմ ականջներս վարժուեցան աղմուկին, ներսէն միմիայն սա խօսքերը կրցայ լսել:

— Աստուած չընէ, ես անոր խելք դընեմ ... մենք էրիկմարդ չունինք տէ, պազի բան պէտք ըլլայ նէ առնել կուտանք ... իշտէ ատ խըտար, ան պօշ մարդուն ինչին, ... հա՛ հա՛ հա՛ ...:

Կըսեն թէ դաշոյնը երբ սրտին մխուր՝ վայրկենապէս կը մեռցնէ զմարդ: Արաքսիին շեգուն սուր դաշոյնի մը պէս սիրտս մխուեցաւ կարծես: Մեկնեցայ:

Արաքսիին իւրիւր մայրիկը աղջիկը ամուսնացնելու համար մարդ ներս առած է եղեր այդ գիշերը, և որպէս զի գործը եփ ելլայ, մեր Արաքսին ալ ի բերանէ իւրմէ սկսեր է զիս նախատել ...:

Անէ՛ծք ... կին անունին, մանաւանդ աղջիկներուն, որոնք մէկուն գլուխին զարդ կամ փորձանք ըլլալու համար՝ մէկուն գիրկէն կեղան միւսին կը նետուին: (Բառտօն ֆալան չեմ ըսեր, այս այսպէս է):

Այդ գիշերէն ի վեր ամբողջ տարիներ չէի տեսած զինքը, սակայն այդ օրը երբ սիրելոյ մը թաղէն դարձին իր իսկ թաղէն կանցնէի, տեսայ այդ հուրին որ, տանը սեմը կը չփէր բոպիկ, մինչ լաճերը անվարտի՝ գետինը մարմարներուն վրայ կը տապալկէին աղտոտ, ձիշդ մօրեմունտ զաւակները:

Ու երբ, արդեօք ա՛ն է, ան Արաքսին՝ որ ատեն մը կը պաշտէի, կը պաշտէի ... ըսելով՝ պահ մը կեցած երեսն ի վեր կը նայէի, յանկարծ գլուխը վեր առաւ, մէջքին խօթած բէշը վար ձգեց ու երեսն ի վար

կեղտոտ մազերը վեր առնելով ըսաւ, բարկութեան զենիթը հասած մատակ առիւծի մը պէս՝

— Միս հաւնիլ կուզե՛ս նէ խասապին խանութը գնայ, չա՛րխըն ...:

Անյարմար ամուսնութիւնը և ճիկին առնունը որչա՛փ կը փոխէ եղեր զմարդ ...:

Երբեմնի քնքոյշ կոկոնն Արաքսի

Չլթիկ կնիկ մ'էր հիմա ... յար ախի:

ԲՕԳՈՒՍ

Ս Է Ր Ը

Կը յուսամ թէ ամէն երիտասարդ քիչ շատ սիրահարուած՝ սիրունի մը ունենալէ ետքը ես ինչո՞ւ չունենամ ըսելով՝ սկսայ ասդին անդին փնտռել, բայց անգութ կոյր բաղդը չի կամեցաւ քաղաքին մէջ խօսուն պուպրիկ մը գտնել ինձ, սանկ մտտ, կրակոտ և ամէն առաւելութիւններով օժտեալ: Բայց ետքը բռնուեցայ սիրոյ մը, ուրկէ օճիքս ազատելու համար Ռօքֆէլլըրի միլիեօնները չէին բաւէր:

Սէրը կանանց վրէժխնդրութիւնն է:

Պատմեմ եթէ կը հաճիք:

Իրիկուն մը, սովորական սիրոյ արշաւանքս կ'ընէի, պարտէզի մը պատուհանին խօրը ինչ տեսնամ, երկու աղջիկ, երկու կին և երկու մարդիկ որոնք նուագածու էին: Երբ տեսայ մեծ օրիորդը, բաներ մը եղայ, այսինքն, կը հասկնաք անանկ չէ՞, տակնուվրայութիւն մ'որ հոգիիս ազդեց:

Այդ պարտէզը ուխտատեղի մը դարձաւ իմ սիրահար հոգւոյս համար, պղաճնակաճեճ կ'անցնէինք կոր դէպի Թօպէնցազը:

Իրիկուն մը դարձեալ գաջի, տեսայ որ այդ պարտէզին մէջ մէկը չիկայ, կը հարցնէի, ծառերուն, օղին ջուրին և սիրոյս:

— Այս պարտէզը այլ ևս չպիտի նուագեն, ըսաւ բարեկամ մը որ վիշտ չունէր:

Այս խօսքը, իբր կայծակ՝ կայրէ կը մրկէ սրտիս ծառը արմատէն:

Փոխանակ քաղելու կը թռչիմ հիմա փո-

դոցին մէջ, պէտք էր երթալ պատճառը հասկնալ:

Դուռը բանալով ներս մտայ յիմարի մը պէս:

Հոն, այդ տան մէջ կեանքս խորտակուեցաւ, հոն բազումը կը տօնէին, բարեկամներ օղի կը նետէին, բայց ես բնաւ չխմեցի, որպէսզի լաւ տեսակցիմ օրիորդին հետ, ինչ և իցէ գիշերն հող անցուցի, բայց պէտք էր հետեւեալ առտուն կանուխ ելլալ, արդէն գիշերը առանց քնանալու անցուցած էի բարեկամներս արթնցնելով մեկնեցանք դէպ ի իրենց տունը:

Ճամբորդութեան համար պմէն բան պատրաստած էին, բայց միայն թէ օդը գէշ էր, ասոր համար ըսինք թէ պէտք է մնալ: Բարեկամներէս մէկը ըսաւ թէ ո՛ւր պիտի երթանք: Որոշեցինք անոնց նուագած պարտէզը երթալ գարեջուր խմելու և անոր փրփուներուն մէջ մեր հառաջանքները խառնելու:

Նոյն իրիկունն ալ կերանք խմեցինք բայց վերջինն էր, որովհետեւ նուագածուհիները հետեւեալ առտու պիտի մեկնէին:

Ո՛վ երջանկութիւն, որքան շուտ կուգաս և որքան շուտ կը մեկնիս:

Նուագածուհիները հետեւեալ առտու մեկնեցան, ըլլալիքը եղաւ, փորձանքը իր ետեւէն փորձանքներ կը քաշէ:

Կեանքը խորտակուած նաւակ մ'է հոսանքէն տարուբեր:

Օհ փառք քեզ Աստուած:

Ոհ եղբայրներս, չըլլայ որ սիրահարուիք նուագածուհիներու կամ երգչուհիներու հետ, որոնք ճիշդ գողերու պէս կ'ըլլան, ձեր քրտակներուն տիրանալէն ետքը ձեր կեանքն ալ կը փճացնեն. ահա մերինները կենդանի օրինակ:

Թռչունը թռաւ, բայց երկար ժամանակ թռած կողմը կը նայիմ, տխուր ժպիտով մը:

Ճշմարիտ սէրը ամուսնական կեանքին մէջ միայն պէտք է փնտռել, այս է ձեր ծառային վերջին խօսքը:

Էփրեմէ

ԳԻՐՈՐԳ Յ. ԳՈՅՅՈՒՄՃԵԱՆ



ՀՏՊԻՏԻՆ ՇԱԲԱԹԸ

Բըր... բըր... բըր... բըր... խնդացին չորս կողմէն:

Չորս կողմն նայեցայ որպէսզի ես ալ խընդամ և նայեցայ որ ամէն գլուխ ինծի կը նային:

Արանց և կանանց գլուխներ:

Վրաս կը նայիմ...

Ռհ, վարտիքով շապիկով դուրս ելեր եմ: Մէկը մօտեցաւ ինծի և ուսիս հարուած մը տալով.

— Պարո՛ն, ամօթ կ'ըսեն բան մը կայ ըսաւ:

— Այո՛ գիտեմ որ ամօթ կ'ըսեն բան մը կայ պատասխանեցի գետինը կոկոզ ընելով...

— Լըռէ՛ սրիկայ, գնա՛յ բանթալօնդ քաշէ...

— Բանթալօնս լաստիկ չէ որ քաշեմ կ'ըսեմ իրեն քսուելով...

— Բիւ՛հ, նայէ՛ աղջիկներ կիներ կը նային կոր...

Նայող աչքի դէմ պատ չեմ կրնար քաշել կ'ըսեմ...

— Գնա՛ հագիր բանթալօնդ:

— Բանթալօն չունիմ...

— Չունիս...

— Այո՛, կան մարդիկ որոնք անվարտի են, ես անվարտի չեմ ալ անբանթալօնի... եթէ աւելորդ մը ունիք հաճեցէք տալ ըսի: ձեռքս ողորմութիւն ուզելու պէս բանալով,

— Չունի՛մ, բայց կը խրատեմ որ ատանկ չպտտիս, ես բարոյականը կուզեմ որ կանգուն կենայ:

— Ասանկ չպտտիմ հէ՛, այն ատեն հըրաման կուտաք որ Կիւստավ Նակիլ մը ըլլամ:

— Ա՛... ա՛... ա՛... մե՛րկ. մե՛րկ մե՛րկ, ես բարոյականը կուզեմ որ կանգուն կենայ...

— Ըսել է վարտիքով պտտիմ...

— Ո՛չ, ոչ, ոչ...

— Ըսել է մերկ պտտիմ...

— Ա՛, ո՛չ... ոչ... ոչ...

— Այն ատեն վարտիքով պտտիմ քանի որ հապիտ եմ...

— Հտպի՛տ էք, այն ատեն կրնաք վարտիքով ալ պտտիլ ու մերկ ալ պտտիլ...

Հիմակ որոշած ենք մերկ չպտտիլ ալ անդրալ... տիքով՝ աննդրալար... քեան գրականութիւնը մշակելու համար...

Մ Ո Մ Ը Մ Ա Ր Է ...

[NOCTURNE]

Քանի որ խնդրոյն մէջ մոմ կայ և թէ այդ մոմն ալ կը մարուի, անպատճառ գիշերային միջադէպ մըն է պատմուածքը, և կամ մութին մէջ կատարուած գործողութիւն մը որ... պէտք չէ հրատարակուի: Այնպէս չէ՞, ո՛վ բարոյագէտ փրկասփայ բարեկամս, դուն որ հակառակ ամերիքան վարտիք հագնելուդ, եթէ ջղային դրութիւնդ գրգռուի ու ցանկութեան պէս բաներ մը զգաս, չունի՞ր Բըթի Շանի պարտէզին երկաթներուն մօտ կ'առնես՝ դիտելու համար հոգ գտնուող բառամանաներու կարկտան խոնչու գուլպաները և քուրջէ կուրծքերը...:

Ահա քեզի և քեզիպէսներուն, այսինքն կեղծ ու դիմակաւոր բարոյամոլներուն կը ձօնեմ այս գրութիւնս, որպէս զի ամէնայով կարդաք և փորձառու ըլլաք՝ կեանքի աշխարհ կ'որմէք փորձանքներուն հանդէպ:

Մոմը մարէ...

Ի՞նչ կրնայ ըլլալ...

Բայց մեր պատմելիքը մոմը չի մարած՝ կ'սկսի ու մարելուն պէս կը վերջանայ:

* * *

Խամպուռ ըլլալ զուգուռ ըլլալ՝ բայց հարուստ ըլլալ, չաչի նայիլ մաշի նայիլ, բայց հարուստ ըլլալ, թօփալ՝ բայց հարուստ ըլլալ, ծերուկ մերուկ ըլլալ բայց հարուստ, վերջապէս ըլլալ այն բոլոր միակիւնութիւնները՝ բայց հարուստ ըլլալ, ահա օրուան մայրերուն իտէալը ու գաղափարականը փեռայ քանտիտաններուն համար:

Մէկը կար մէկը չիկարով չեմ սկսիր յօդուածս, քանի որ իրականէն առնուած է և ոչ թէ մասալ:

Գաւառի անկիւններէն Պոլիս եկած, ու հոս իր ժրաջան և ուղղամիտ գործունէութեամբը համեստ ու կոկիկ դիրք մը գրաւելէ վերջ, օր մ'ալ առաջնակարգ գրամատչրի առնուն ու համբաւ հանող Գէորգ աղա Կծիկեանի մաղազան մեծ պահք օր մը չալլը կին

մը ներկայանալով կուզէ աղային հետ տեսակցիլ, վաճառատան մէջ գտնուողներէն մին առաջ անցնելով,

— Ի՞նչ է ան տուտու, ո՞վ կուզես... կը հարցնէ:

— Աղան տեսնալ կուզեմ, երկու չիֆթ լախըտը ունիմ ընելու կըսէ կինը, կեղծ խնդում երես մը շինելով, մինչ գրագիրը տնանկ աղքատ կարծելով՝ գրպանէն քառսունոց մը կը հանէ կուտայ:

— Մեղայ Աստուծոյ, մէյէր ես մուրացկան էի... աղային երկու չիֆթ լաֆ ունիմ, իրեն ըսէք տէ քովը ելլամ...

— Ճանրմ ի՞նչ պիտի ըսես նէ ինծի ըսէ, խօսք կառնէ մարդը, աղան հիմա զբաղած է...

— Պաղած է նէ ես անոր իլաճ ալ թարիֆ կընեմ, հէմ ալ չատ իխթիզալը գործ մը ունիմ, իրեն ֆայտալը...

Ու տեսնելով որ ճար չիկայ, ներս կառաջնորդեն կինը ու շիտակ աղային սենեակը կը հանեն, երբ Գէորգ աղա ակնոցը քիթին կէսը իջեցուցած հաշիւ մը կը քննէ:

Անձանթ կինը ներս մտնելով չորս դին կը նայի ու դուռը գոցել կուզէ:

— Չէ՛, չէ՛, մի գոցէր, բաց ձգէ... կըսէ աղան ակնոցը ձեռքը առնելով:

— Գոցեմ, աղաս, անանկ իխթիզայ է քի գոցենք տէ անանկ տեսնուինք...

— Չըլլար ճանըմ...

— Գուզում աղաս, գոցեմ քի մարդ չի տեսնայ...

— Էյ թամամ... ույտուրսուք, ճանրմ լախըտը պիտի ընես նէ թող դուռը բաց մնայ, գոցելը ի՞նչ է...

— Ըռահաթ սիրտով չի պիտի ըլլամ աղաս, իզին տուր տէ գոցեմ, կը պնդէ կինը, որ մոռցայ ըսելու 35-40 տարեկան, իր պարզութեանը մէջ գեղեցիկ կին մըն էր, «կուտեմ քեզի» աշուկուէ:

Գէորգ աղա, տեսնելով որ ճար չիկայ,
քիչ մ'ալ կնոջ բառախաղաթենէն ազդուած,
կամայ ակամայ կը հաւանի որ դուռը գոցուի:

— Ի՞նչ է նայիմ, ըսէ, իշտէ դուռը գոց-
ուեցաւ ...

— Աս օրուան գալս, թէքտէն չէ աղաս,
հրամանքդ գիտնալս ազապ ես ...

— Էյ հա՛, ի՞նչ կայ ...

— Օլտուխճա, մալըդ մէլալըդ, բանըդ
գործդ տեղն է ...

— Էյ բէք էյի՛ ...

— Երեւացածը, իծծունն ալ անցուկ չես...
հէմ ալ անանկ է ...

— Սողըա՛ ...

— Մարդս մարդով ըլլալը հէլպէթտէնէ
ինէ աղէկ գիտես ...

— Կրնայ ըլլա՛լ ... ետքը՝ ...

— Տուն տեղ ըլլալը շարթ է, գուրցելս
էվէլօք պան ...

— Կընի՛կ, գործ ունիմ, հիսապ ունիմ
նայելիք ...

— Ձէ սանքի, մախսուսի գալ տէ իրիճա
ընելս սա է՛ր քի, հրամանքիդ կէօրէ, թամ
պերնիդ լոխման, հէմ ալ խաս լոխմայ, ը-
ռընտիկ ֆիտան աղջիկ մը կայ, հազար ու-
զովը ետ դարցուած, օլուր օլմազ մարդու
ուշմիշ չըլլար ...

— Կընի՛կ, աստար էզլոյէթ չի տայիր տէ
սա բանը է՛ն առաջ ըսէի՛ր նէ, ես ալ քեզի
ճուղապը տուած տէ չորս սահիֆէ հիսապ
նայած էի ... ես չի տի կարգուիմ ...

— Վուշ մըսէր, վրաս փուշ փուշ եղաւ,
ես քեզի համար գործս ձգեի եկեր եմ ...

— Տավէթնամէիս մէջը իմզաս տեսա՛ր...

— Ձէ ամա, մարդ կայ քի կտակ կընէ,
Աստուծոյ զօրքին մեռնիմ, մարդ կայ քի
ժամ կը շինէ, իշտէ ես ալ աս աղջիկը քեզի
խըսմէթ ընէի նէ՝ օխտն անգամ Արմաշ ուխ-
տի գացածի խըտար կըլլայի ...

— Ես կարգուելու միտք չունիմ կընիկ,
պօշ զահմէթ էս ըրեր ...

— Ամա աղջկանը աչուկները տեսնա՛ս,
նա ամէն մէկ հատը նոր ածած հաւկիթի
սառլի պէս ...

— Աղէկ ամա ինծի համար չէ ...

— Ան երեսները տեսնա՛ս՝ կաղընտի բէլ-
թէ, թիբիլ թիբիլ ...

— Հասկըցա՛նք, Աստուած տէրօջը պա-
ղըլամիշ ընէ ...

— Կէօքսէր մը քի՛ վրան թէփսի տիր,
խատէիս մը վար չիյնար ...

— Մեխանայ չպիտի բանամ ...

— Մէջկը ըսես նէ, նա՛ պաշ մատըդ
օռթա մատըդ իրար պեր, իշտէ աս խըտար...

— Աղէկ ամա՛ ...

— Խալչաներ մը քի, ախըռանմիշ եղած
ծիներուն պէս քալած վախիթը օռսա բօճա,
իքի եանլը տէ տէօչլիւ ...

— Հասկցանք կընի՛կ ... մի յոգնիր ...

— Մաղերն օր ըսե՛ս նէ ... պօյին հետ
պարապար տէ լօտօսի տալղաներուն պէս
քէօթիւր քէօթիւր ...

— Կընի՛կ, գործ ունիմ, հէրիք է ալ-
թըիս ...

— Հա լեզո՛ւն ... պիւլպիւլը, խանար-
եան կը ճաթին դէմը ... հէմ ալ ֆըռանսըդ-
ճա, ինկիլիզճէ, հաթիմ պիթիմ ...

— Վարժուհիի պէտք չունիմ կընի՛կ,
վրաս լէօպէթ կը բերես կոր ...

— Էյ աս տահա մէթովս վրադ կէշու-
թին կուգայ կոր նէ աղա, ան թեւդ առնես
տէ կընիկս է ըսես նէ ի՞նչ պիտի ըլլաս ա-
ճապ ...

— Էօֆ ... պէ պապամ կարգուելու
չեմ, երկինքի հրեշտակը ըլլալու ըլլայ նէ
մախպուլս չէ, հասկըցա՛ր ... հա՛ ձգէ տէ
սա հիսապս նայիմ ... կըսէ Գէորգ աղան,
նեղուելէն կաս կապուտ կտրած:

— Ան հիմա անանկ կըսես ամա գիտեմ
քի սիրող եփ ելաւ, ե՛րբ կուգաս կը տես-
նաս, ըսէ տէ խապար տամ մօրկանը ...

— Կընի՛կ, խելքի՛դ եկեր է ի՞նչ է ...
հայտէ բանըդ գնայ, չեմ կարգուի՛ր ...
էվէնմէ՛մ ... հասկցար ...

— Ըսել է քի սօն ճուղապդ աս է, չես
ուզեր կոր ...

— Ես որ սահաթ է ի՞նչ կըսէի կոր քի...
Աստուած բարի խըսմէթ տայ ըսելով նորէն
ալնոցը քիթին կը դընէ և կսկսի իր հաշիւ-
ները շարունակել, մինչ կինը սողոսկելով
գլխիկոր ետ կը դառնայ, աւելցնելով,

Անունն ալ մոռցայ, պէլքի ըսեմ նէ սիր-
տըդ կը սիրէ ... Արուսեակ ...

—

Գէորգ աղա առանց պատասխան տալու
իր գործին կիցնայ ու կինն ալ կստիպուի
վաճառատունէն դուրս ելլալ, անյաջող իր
ձեռնարկին մէջ:

* * *

Երկու օր վերջ, քահանայ մը վաճառա-
տուն կուգայ:

— Գէորգ աղան հո՞ս է, կը հարցնէ:

— Այո, Տէր Հայր վերն է:

— Քիչ մը կրնամ տեսնալ ...

— Ինչո՞ւ չէ, հրամանեցք ըսելով՝ վեր
աղային սենեակը կառաջնորդեն:

— Ողջոյն Գէորգ աղաս ...

— Օրհնեցէք Տէր Հայր, հրամանեցէք ...

— Հիմա կըսես քի Տէր պապային քունը
չէ տարեր, առտունն կանուխ վրաս է ե-
կեր, ամա՞, խերով բանին չեմ դիմանար:

— Խեր է իշալլահ Տէր պապա, էկէր
թաղական ըլլամ տէրի եկեր ես նէ, նստէ
խախփէ մը սիկառ մը խմէ գնայ, գիտես ես
չեմ ըլլար ...

— Ձէ ճանըմ թաղականի խնդիր չէ ...

— Էկէր քի աղքատի փարայ կուգես կոր
նէ, ալթըն տալով տալով՝ սըրան մեղի ե-
կաւ աղքատի սըրայ անցնելու ...

— Ձէ օրհնած չէ, ատանկ բաներու հա-
մար ես եկեղեցիս կը ձգեմ տէ թախ հոս-
տեղունքը կուգամ հիչ ...

— Էյ անանկ է նէ, տունէն խումաշ մու-
մաշ կուգեն կոր, ըսէ նայիմ ի՞նչ ըռէնկ,
քանի՞ առջըն ... ըսեմ տէ թող տան ...

— Շնորհակալ եմ, մաղաղան իմա է զա-
թը, ֆախաթ ըսելիքս ուրիշ բան է ...
Գիտնալս ամուսնացած չէք հրամանքնիդ ...

— Հա՛ ... էյ հա չեմ կարգուեր ...

— Կաղաչեմ, պիրտէնպիրէ պատ մի քա-
շեր խօսքիս առջեւը, ի՞նչ հարցունեմ նէ
անոր պատասխան տուր ... սանկ քսանը
հինգէն եռեսուննոց խաթունիկ բան մը ըլ-
լայ՝ նէ ...

— Կուղէնէ տասնը հինգէն քսան ըլլայ,
ինծի համար չէ տէր պապա ...

— Էյ սանկ էթինէ տօղուն թըխնաղ-
ճա՞ ...

— Ձէ տէրտէր, նէ թըխնաղը կուգեմ նէ
ալ զայիֆը ...

— Սանկ քիչմիրի, խնդում երես, եկե-
ղեցասէր, բարեպաշտ ...

— Պէ քուզում տէրտէր, ես քենէ աղ-
ջիկ ուզեցի՞ քի խալթախըդ դրեր շիտակ ե-
կեր տէ իս ավարա կընես կոր ...

— Ճանըմ ձեռքս է մեծցեր տէ անոր հա-
մար կուգեմ կոր քի բարով տեղ մը իյնայ,
Գէորգ աղա, եկուր դէմ մի կենար, սա բա-
նը գլոխ հանենք ...

— Ինծի նայէ տէրտէր, հիմա ըսենք քի
հարսնիքը ըրի՞նք ...

— Օ՛խ ... շատ ապրիս, մէկտեղ ծե-
րանաք, խայրըլը կողակից ըլլայ, թոռան
տէր ըլլաք ... ըսելով տէր պապան կսկսի
վեր վեր ցատկել, մինչ Գէորգ աղան շուա-
րած ոտքի կելլայ և կսկսի so madelon ձայ-
նով պոռալ,

— Պէ տէրտէր խելքի՞դ եկաւ, ո՞վ կը
կարգես կոր, չեմ ուզեր պէ՛ ... ծօ՛ եան-
կըն վա՛ր ...

Ու բոլոր վարը գտնուող մշակները վեր
կը վազեն աղան ազատելու համար:

— Քիչ մը ջուր ... աման, քիչ մը իւր-
մօնաթա՛յ ...

— Տէր պապա ի՞նչ եղաւ, աղաին բա՛ն
մը ըրիր ... կը հարցնեն զարմացած, մինչ
տէր հայրը խալթախը դրած մեկնելու կը
պատրաստուէր,

— Ձէ օրհնածներ չէ՛ ... կարգել ուզե-
ցինք, աղէկ աղջիկ մը կար, իրեն տալ ու-
զեցինք, չեմ ուզեր տէրի կը պոռայ կոր ...
կեցիք բարով ... :

— Դուրս տէրտէր դուրս, պէ մարդ Աս-
տուծոյ, ես քենէ աղջիկ ուզեցի՞ քի ինծի աս
հալը ձգեցիք ըսելով մինչ հաղիւ սիկառ մը
քաշելով պիտի սթափէր, տէր պապան կըր-
կին դառնալով,

— Ա.Ֆ կընես խըռս մեկար ամա, անու-
նը Արուսեակ էր աղջկանը, սիրտդ ըլլայ նէ
ես առտունքը խուցն եմ, եկուր ինծի գը-
տիր Գէորգ աղա, ըսելով կծիկը կը դնէ,
անյաջող ու տրտում ձիտը ծուռ:

* * *

Մէկ երկու օր վերջը:
Թռամվային մէջ բարեկամ մը կը հանդիպի Գէորգ աղային.

— Աֆէրիմ Գէորգ աղա, ասանկ սուր սուս մենէ գողտուկ հէ՞...

— Ինչ է, խեր ըլլայ, ինչ է եղեր քի...

— Խըյանէթ, ասանկ օրի մը մէկ մարդ մը իր բարեկամները տավէթ չընէնէ, ո՞ր օրին պիտի ընէ...

— Չեմ հասկնար կոր, ախպար քիչ մը բաց ըսէ...

— Հիչ ինչ պիտի ըլլայ, նշանուեր ես տէ մարդ խապար չունի...

— Պէ պապամ, նշանտուք չէ քի, միտքիս պուճախէն պիլէ անցած չունի, ուրկէ՞ իմացաք...

— Նա՛ Տէրպապան մերիններուն ըսեր է քի՛ Գէորգ աղային գործը լմնցուցի տէյի...

— Էյ հեռու կարգէն խալթ է կերեր, իրաւ քի կուգան կերթան կոր ամա՛ ծօ՛ պիր տիւշիւն. Գէորգ է վլէնիր մի՛...

— Սանքի իրաւ ալ ըլլայ նէ գէշ բան չէ Գէորգ աղա, աս պէքեարութեանդ սօնը ո՞ր պիտի երթայ, տուն տեղ ունիս, հալըդ վարկըդ տեղը, կնիկ մը առ տէ քէյֆդ նայէ...

— Կայնէ նայինք գլոխս պան մը կը դառնայ կոր ամա, Աստուած բարին ընէ, ըսելով վար կ'իջնայ կառքէն ու ճամբան կ'սկսի ինքնիրենը խորհրդածել.

— Ծօ Գէորգ, քէնտինէ կէլ, դուն նալպուրճի հաճի Թորոսին տղան էիր, հարըդ մուռա քսանըչորս սէնէտ ձգեց, ատոնցմէ չորս հատը թահսիլ ըրիր, մնացածը մինտէր ալթի դրած են, իւշկիւղարութիւնովդ բանի գործի տէր եղար, մաղաղա բացիր, սէրմայէդ է վլէցուցիր, քիչ շատ անուշ չինեցիր, աս օր ալ սայէյէդ ութը հոգի տուն տեղ կը նային կոր... Կէնճութինդ անցաւ, օլմուշ մուշմուշա դարձար, տունիդ էչիկէն տիշի կատու մը պիլէ ներս չի մտնար կոր, աչճի ունիս, այվաղ կայ, իրաւ քի աղուոր պէս լէմէ մը բռնեցիր, ֆախաթ վաղը մէկալնօր աչքի զարնէ նէ՛ ըռէզիլ պիտի ըլլաս... համմէ՞..., սա տէրպապային ծառքին տակի ախլիկը, կնիկը բէք մէթ ըրաւ... իշտէ գառը, իշտէ փարայ... աճապ շաշխընութին է ըրածս... կայնէ նայիմ, չիշման պալըդ էթ-

լի ըսաւ, աչքերը խորուխու թա՛մ ուղաճիս պէս... կէօյիւսիւ... կէօյիւսիւ ամա՛. առապա քաշել չպիտի տամ ես... սիւտա՛ տանայ հիչ... ծօ Գէորգ կէլ շու ալը գալըրմա... անո՞ւնը... կայնէ նայիմ... Ա... Ար... հա՛, Արուսեակ... ծօ՛ իսմի տէ կիւղէլ... է՛յ Գէորգ խենդիք տիր... գառըլընէ եաքաճագսըն... պաշընա պէլա՛ մը... ֆախաթ, վաղը ելլամ հիւրդնամ նէ՞... ծօ պուտա վար... ինձի ով պիտի դնէ վերցունէ, պէսլէսէն ըսես նէ աչճիին հետ ըլլալը կը հասկնամ կոր ամա, ինչ խալթ ուտում... իրիկունները ճիվէրս աղուոր կը շիէ կոր բօսաալը..., պէքեար եմ տէյի ճանճ մը պիլէ դուռս չի չալէր կոր... պէքեար քէօբէյին պիրի, ամա լիրա պապասը ըմըշսըն... ծօ՛ քիմ քիմէ, Գէորգ եկուր հա ըսէ սա խուշը խաֆէսը դիր... ծօ տուր պագալըմ... եաշ էլլի պէշ, շէօյլէ պէօյլէ պէշ տահա թաւրիս ֆարքը ալթմըշ, պիր սէնէ տէ հէյա մօլա... էյ սօղրա՛, մեր Արուսեակը... հայտէ սալօնա, հայտէ սալօնա... հառէ՛չ, ունա վօլթա, տուէ վօլթա, ունա ֆաթիֆա... ես ալ ներսի օտան չուպուխը ծառքս, կէօյիւկը քիթիս, էնֆիյէ քաշեմ... չէ՛, Գէորգ... քէնտինէ կէլ... Արուսեակ... միտքէս չելար կոր սա նալլէթ անունը... քառը մը պուէքիմ, ինչ սե սահաթ է եղեր քի վրաս եկաւ տէ միտքս ձգեց... կիւղէլ գարը սահալի օլմագ տա պաշկա տըր... ալաճայըմ պէ, սօն եաշըմտա ըռահաթ իտէյիմ, ծոտան սօնրա իսթէր թօփրագ պէսլէսին իսթէր Սէթրաք, ըսելով երբ կը քալէր շոշորդ քայլերով, արդէն տունէն բաւական հեռացած էր, ուստի ետ դառնալով հաստատապէս որոշեց տեսնալ, նշանուիլ և ամուսնանալ Արուսեակին հետ:


Յաջորդ թիւով պիտի պատմենք թէ ինչ պէս և ինչ պարագաներու տակ Արուսեակ կէս գիշերին Գէորգ աղային մը հրամայէ՛

— Մոմը մարէ...

(Շարունակութիւնը յաջորդ թիւով)

ԼԻԼԱՆ





Ուր Ամբակում առաջինը
բլլալով կը ծանուցանէ թէ՝
գինովութեան դարմանը գրե-
նուած է եւ կը պատմէ Կող-
մոս աղաի մը պատմութիւնը:

Գինովութիւնը չնչուած, ալքոլամոլու-
թիւնը սրբուած ...

Գօզա անուն փոշի մը հնարուած է ...
ի միտ ցաւ գինովներու ...

Այդ փոշին սուրճի, թէյի, կաթի, պի-
ռաի, օղիի մէջ եթէ դրուելու ըլլայ, կը
գանեցնէ գինովը ... նոյն իսկ եթէ անիկայ
փաթիլը ըլլայ ...

Գօզա փոշին, կամաց մը, գինովին կնոջ
կամ աղջկանը կամ քրոջը կողմէ գաւաթին
մէջ կը ձգուի ու անկէ ետքը գինովը առանց
զգալու կը բարեփոխուի ...:

* * *

Ա՛լ մեր Կողմոս աղան ... փաթեով տուն
չպիտի բերեն ...

Եւ ոչ ալ Դուկաս աղան ... թեւերէն
մտած ...

Եւ ոչ Ջէնոփ աղան ... գլտորելով ...

Ալ Սիոս աղան կնիկը չպիտի ծածէ ...

Ասոնց մէջէն առնենք իբր օրինակ Կող-
մոս աղան. Կողմոս աղա, փաթեով չպիտի
գայ տուն, այլ ... կառքով, քանի որ հա-
րժստացած պիտի ըլլայ տարին 1095 զըշ-
խնայելու երեսէն ...

Ալ Կողմոս աղան, գինիին ու օղիին մէջ
լողալու տեղ ... ծովուն մէջ պիտի լողայ
և կամ ըստ երգիծաբան Պարոնեանի ...
պարտքի մէջ:

Կողմոս աղա ալ գինին՝ ջուրի պիտի վե-
րածէ, առանց օգգապազ մը ըլլալու:

Բայց տարօրինակ պիտի ըլլայ այն օրը,
երբ առաջին անգամ, փոշիին դրուելէն ետ-
քը, օղի լեցնէ գաւաթիկը և խմէ, երեսը
թթուեցնելով պիտի ըսէ. — պաշտօնը կէօ-
զիւմէ զըլըմ կէօզիւքմէյէ:

Եւ մէկ երկու օր ետքը, առանց քիւֆէյի
տունէն ներս պիտի մտնէ:

Ուրիշ բան մը:

Կողմոս աղա, տունը կալօն մը ունի, ու-
րուն անունը մկրտած է «գառա օղլան»
մակդիրով:

Առտուն կելլայ «գառա օղլան» ը բերէք,
իրիկունը եթէ դայ՝ նորէն «գառա օղլան» ը
բերէք, տարէ՛ք կըսէ՝ երբ չիչը պարապ է:
Ահա այս «գառա օղլան» ին՝ մէջ եթէ
Գօզա դրուի, ծէ՛ «գառա օղլան» ը եթէ
դունէն դուրս չելլայ՝ դոնէ՛ պատուհանէն
դուրս պիտի գլտորի:

Կողմոս աղաի կեանքէն անէքթոտ մը այս
առիթով:

Իրիկուն մը, ժամը երեքին, Կողմոս ա-
ղան տուն կը բերուի սովորականին պէս ...
փաթեով:

Կինը քիւֆէին մէջէն կը վերցնէ ... ձմե-
ռուկի մը պէս և սենեակին մէկ անկիւնը կը
դնէ:

Այդ իրիկունը լամբարին կաղը հատած է
եղբը:

Եւ կինն ալ հասցնելիք գործ մը ունի
ձեռքը:

Լամբարը կը մարի՛ ...

Կը շուարի կինը, չորս կողմը կը նայի և
լուցկիին տուփը առնելով կ'ըրեքա կը պոռայ
ու էրկանը վրայ կերթայ:

Կողմոս աղա, երեսը դէպի վեր դարձու-
ցած էր, կարծես թէ առաստաղին գամերը
կը համբէր:

Կինը անոր բաց բերնին մէջ կը դնէ Թիթիլ
մը և լուցկի մը կը վառէ ...

Բլա՛ֆ, ինչպէս որ օղային կաղի մը լուց-
կի մը եթէ վառուելու ըլլայ կընէ, նոյնը
կըլլայ նաեւ Կողմոսի բերնին ...:

Պայծառ լոյս մը սենեակը կողողէ:

Եւ տիկինը կը նստի ու գործին կը նայի:

Այսպէս Կողմոս աղաի գինովութիւնը ա-
ռաջին անգամ ըլլալով՝ կնոջը օգտակարու-
թիւն մը կը մատուցանէ:

Եւ պատրոյգը մինչեւ կէս գիշեր կը վա-
ռի և անկէ ետքը, արդէն Կողմոս աղաի
ներսիդէին սքիբթօն հատած ըլլալով կը մարի:
Նայեցէք տիկիններ, որ ձեր էրկանը գա-
ւաթին մէջ ... Գօզա դնէք կամաց մը:

ԱՆՄԵՆՈՒՆ

ՏԱՐՈՐԻՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Օր մը, Ամերիկայի երբեմնի նախագահ-
ներէն Մ. Լինքոլն, գիւղի մը մէջ պտտած
ատեն, այգիի մը դռանը առջեւ ծեղուկ
մարդ մը տեսաւ որ դառնապէս կուլար և
ուրիշ ծերուկ մը որ քովը կեցեր էր և պատ-
ճառը ըլլալ կ'երեւար:

— Ինչու կուլաս, հարցուց նախագահը
անոր որ արցունք կը թափէր:

— Կուլամ, պատասխանեց ծերը, ինչու
որ հայրիկս որ ահա կեցած է, ապտակ մը
զարկաւ երեսիս...

— Իրաւացի է, իրեն ապտակ մը զարկի,
պատասխանեց միւս ծերուկը, ինչու որ ար-
ժանի է:

— Ի՞նչ ըրաւ որ կը հարցնէ, նախագա-
հը զարմացմամբ:

Ծերուկը ըսաւ ծանրութեամբ մը

— Իր մեծ հօրը դէմ յարգանքի պակա-
սութեան մէջ գտնուեցաւ:

Այս լացող անպարտաճանաչ ծերը վաթ-
սուն տարեկան կար, ա'լ երեւակայեցէք մեծ
հօրը տարիքը:

* * *

Աս' տեսարանը անցաւ Ամերիկայի մէկ
քաղաքին ելեկտրական թրամվայի մը մէջ:
Դեռատի կին մը, վայելչօրէն հագուած,
ներս մտաւ թրամվէն և նստեցաւ նստարանին
վրայ: Թեւեռուն վրայ գեղեցիկ պէպէք մը
կար, որ տանթէլներու մէջ կորսուած էր,
անանկ որ մանուկին վարդագոյն դէմքը չէր
տեսնուեր: Ամենքը աչքերնին անոր յարեցին
մանուկը տեսնելու համար, բայց կինը անոր
երեսը աւելի գոցելու կը ջանար: Բայց յան-
կարծ, պէպէքը տարբեր կերպով մը երեւաց
և յետոյ հաչեց... ի մեծ սոսկում ճամբորդ-
ներուն: Դեռատի մայրիկը աճապարանքով
թռամէն վար իջաւ. մանկիկը լըռած էր:

Բայց շուրջ մը, յետոյ ուրիշ մը, յետոյ
քսան հատ ևս, կը հետեւէին մեծ հաճոյքով
կնոջ և պէպէքին: Խեղճ կինը յոգնած էր և
նստարանի մը վրայ նստաւ... և մանկիկը
սկսաւ հաչել: Քսան շուրջ զանոնք չըջապա-
տեցին: Մէկը անոնցմէ մանկիկին տանթէլ-
ները կը քաշէր, երբ տանթէլներուն մէջէն
չնիկ մը դուրս ցատկեց: Կինը թռամէն դայն
անցնելու համար ըրած էր:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏԻԶԱԿ

Վարժարանիս նպատակն է իր ուսանողներուն տալ
գործնական կեանքի պահանջներուն համապատաս-
խանող հիմնական և առողջ դաստիարակութիւն մը,
ինչիկ և Ամերիկացի ուսուցչական խմբին վրայ աւել-
ցած է, Զուիցերացի ձեռնհաս ուսուցիչ մը՝ մասնաւոր
դժ տալու համար նաեւ ֆրանսերէն լեզուին:

Աշակերտները կը վայելին բժշկական և բնտանե-
կան կրտսերայ խնամք վարժարանին մասնաւոր բը-
ժիշկին, գիշերօթիկ հինգ ուսուցիչներու անմիջական
հսկողութեան և Տիկին Ալմայրի մայրական խնամք-
ներուն տակ:

Վարժարանին յառաջիկայ տարեշրջանը կ'սկսի Սեպտե-
մբեր (Ն. Տ.) Դժ. Գիշերօթիկներուն տարեթիւղակն է 16
Օսմ. Ոսկի, որուն կէսը վճարելի է Սեպտ. Ին սկիզբը,
իսկ մնացեալը՝ Յունիսի մէջ: Դործիական երաժշ-
տութեան դասին համար կը պահանջուի տարեկան
մէկ ու կէս Օսմ. Ոսկի:

Թէ՛ հին և թէ՛ նոր աշակերտներ, եթէ կ'ուզեն
Հայտարար-Փաշայէն կէս գնով ճամբորդել, պէտք է դի-
մեն Գրիգոր Էֆ. Շահպաղեանի և իրենց անունները
արձանագրել տան մինչեւ Օգոստ. 17:

Աւելի տեղեկութեանց համար դիմել Մր. Բիթի
կամ Վարժարանի Պոլսոյ գործակաւորար Գր. Էֆ.
Շահպաղեանի, Պոլսոյ-Հատու, Կ. Պոլիս, և կամ Տնո-
րէնութեան, Պարտիզակ:

10—8

ՀԱՅՈՒՇԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

ԱՏԱԲԱԶԱՐ

Հայուհեաց Վարժարանին նպատակն է Հայ աղջիկ-
ներուն տալ լուրջ դաստիարակութիւն մը՝ դարձե-
ցած և բարեկիրթ տանտիրուհիներ և դաստիարակու-
թեան գործին օժանդակներ պատրաստելու համար:
Վարժարանին տեսչութիւնը աշակերտուհիներուն ֆի-
զիքական, իմացական և բարոյական զարգացումը միշտ
խղճամիտ հոգածութեան առարկայ կ'ընէ: Ինչիկ և
Ամերիկացի 12 ուսուցիչներէ կազմուած ձեռնհաս
ուսուցչական խումբ մը կ'աւանդէ Հայ, Անգլ. Թուրք.
և Ֆրանս. լեզուները. ինչպէս նաեւ բնական, իմաստա-
սիրական, չափական և այլ գիտութիւններ: Մշտնա-
պարտ է մը կ'աւանդէ ձեռագիտութեան, կարի և
կեռագործի դասերը: Գիշերօթիկներու տարեթիւղակն է
12 Օսմ. Ոսկի, որուն կէսը պէտք է հատուցանուի տա-
րեշրջանին սկիզբը, և կէսը ծննդեան արձակուրդին:
Դաշնակի և երգեսանի համար կը պահանջուի 5, 3 և
2 ու կէս Օսմ. Ոսկի, դասառութեան թիւին համե-
մատ: Վարժարանին յառաջիկայ տարեշրջանը կ'սկսի
Սեպտ. 11 ին (Ն. Տ.) Դժ. Իրեկունը:

Աւելի տեղեկութեանց համար խնդրել Վարժարա-
նին յայտարարը, կամ դիմել Մր. Բիթի, Պոլսոյ-Հատու
Կ. Պոլիս, կամ գրել Տր. Ս. Էֆ. Գալաֆեանի, Ատե-
նայեան Խնամակալութեան, Ատարազար:

10—9

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ՅՈՍԿՈԼՈ. — Անցեալ շաբաթ օր ժամը մէկին մօտ հոս շնորհունակ տէր-պապա մը, մէկ քանի հովառտաներու հետ ճակելաբանութիւն ընելը տեսնողներ կը խնդրեն որպէս զի հրատարակութեան տամ իրողութիւնը: (Իրիսկինը դէմք առնես տէ տունդ խմեսնէ չըլլար ա՛ Տէրտէր. Ծ. Խ.):

ՐՈՒՄԷԼԻ-ՀԻՍԱՐ. — Շուկայիկ միւսիւ մը հոս կոշիկներէն վեր գողողութիւն ընելուն առթիւ կազդարարուի իրեն որպէս զի ստափի, եթէ ոչ արեջ փառհղիով տեղը պիտի զրկուի:

ՍՈՒԼՈՒ-ՄԱՆԱՍԹԸՐ. — Հոս մէկ քանի անկուտի միւսիւներ ատէթ ըրած են կռնակ կռնակի պինա տալով՝ աղջիկ գտնուած տուններու պատուհաններն ի վեր շուլուիլ: (Քէշէնքէլէին հախէն եկողը ճանկը կատուն է միւսիւներ. Ծ. Խ.):

ԲԵՐԱ. — Ատենէ մը ի վեր Սըլանտիտի ցուցափեղկը կընիկ գիտելու համար քօնթաթ ընող միւսիւն, անցեալ գիշեր օձիքը ձեռք տուաւ անոր՝ որուն պզտիկ գումար մը պարտք ունէր տարիէ մը ի վեր: (Պախալ Եօռկիին տակառներուն ետին չի տեսար արդեօք... Ծ. Խ.):

ՆՈՅՆ. — Ամէն բան տեսած էինք, բայց ճեպը տէրի գիւպպէի մը հետ տեսակցիլ տալու համար դա Բանկաթիէն Թագսիմ բերելու չափ... բարեացակամ եղբայր մը... մեղայ Տեառն: (Պապա, ձեռքդ տուր... Ծ. Խ.):

ՍԿԻԻՏԱՐ. — Շաբաթ գիշերուն Աղբատախնամ երեկոյթին հարուստա-

փայլ monde մը ներկայ գտնուեցաւ, ի մէջ այլոց կը քաջըլէին... Տիշի-խըռըխի շեֆթալիները... Ծ. Խ.):

ՆՈՅՆ. — Գիշերները նշանածին այցելութիւններէն այս զով օգերուն ետ չի մնալու համար պոյճա նափէ քիւրք մը չինել տուող միւսիւն... չորնամ նէվազիլ է եղեր:

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Չորեքշաբթի գիշեր Գասթէլանօի խումբը գիտելու համար Բերա մնացող մեր համակրելի պետը Լիւս, երբ կէս գիշերին օթէլ կը հասնի, հազիւ անկողին մտած թէ չէ, քովի սենեակէն կնոջ մը երկունքի ցաւերը կը բռնեն, և ինքը թէեւ ոչ *acoucheur*, օգնութեան կը հասնի մինչեւ լոյս: (Քանի որ մէջտեղ հանեցիք այս անակնկալ լուրը՝ յաջորդիւ նիւթ պիտի ընեմ. Ծ. Լ.):

ԳՈՒՄ-ԳԱԲՈՒ ՀԻՍԱՐ-ՏԻՊԻ. — Կը լսենք թէ տեղոյս օրիորդներէն մէկը իր հօրը Գրիգոր աղա կը կանչէ:

ԱՏԱՔԱՂԱՐ. — Ս. Մալմեան էֆ. — Ներկայիւս կուգանք ճշդել ձեր հաշիւը, որով մինչեւ 1 Սեպտեմբեր 1907 վճարած էք Հանրագիտակի բաժնեգինը, զոր սխալմամբ հակառակը գրուած էր մեր նախորդ թիւին մէջ:

Արսօնսկր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ՍՍՍՏՈՒՐԵԱՆ

Պապր-Ալի հասցեի քիւ 52.

ԱՐՍԷՆ ԼԻԻՔԷՆԻ ՏԱՐՕՐԻՆԱԿ ԿԵԱՆՔԸ

ԽԱՐՏԵԱՇ ԿԻՆԸ

Արսէն Լիւքէն ինք հաղորդեց: Էֆօ քրիստի լրագրին մէջ ազդ մը հրատարակուեցաւ, որով կը ծանուցուէր թէ՝ Արսէն Լիւքէն, իր փաստաբան-խորհրդականին՝ Պ. Տէթինանի յանձնած էր այժմամակը, որ հրամանատար Պէստի իրեն ուղղած էր՝ իրեն անձնապէս...

Ամբողջ մամուլի լրագրերները Պ. Տէթինանի քով գացին:

Պ. Տէթինան, Արսէն Լիւքէնի հանդիպելու բաղդը ունեցած չէր, բայց անոր գործը նայիլ յանձն առաւ և ասիկա, աշխարհիս ամէնէն հաճոյալի բանը կ'երեւար իրեն՝ Արսէն Լիւքէնի խորհրդականը ըլլալը:

Հանկեց ցուցուց հրամանատարին նամակը ամէն անոնց՝ որոնք իր քով եկած էին տեղեկութիւն ուզելու: Տոմսակին ուրիշի մը փոխանցուած ըլլալը կ'երեւար նամակէն, սակայն չէր յիշատակէր ստացողին անունը:

«Սիրելի բարեկամս...» գրուած էր մինակ:

Եւ Արսէն Լիւքէն կը պնդէր իր կարգին:

— «Սիրելի բարեկամս» ես եմ...

Լրագրերնրու ամբողջը Պ. Ժէռպուլարի քով գացին՝ որ կը կրկնէր:

— «Սիրելի բարեկամս» ուրիշ մէկը չէ՝ եթէ ոչ ես, Արսէն Լիւքէն նամակը գողցաւ տոմսակին հետ, քանի որ ինք է գրասեղանը գողցողը:

— Թող ապացուցանէ, պատասխանեց Լիւքէն:

Եւ սքանչելի հետաքրքրական տեսարան մը եղաւ թէ՛ այդ տոմսակին երկու տէրերուն միջև՝ ամբոխին իրարանցումը, թէ՛ լրագրերներուն երթալ գալերը, և թէ Արսէն Լիւքէնի պաղարիւնութեանը քով՝ խելոճ Պ. Ժէռպուլարի չփոթութիւնը:

Մամուլը խելոճին ողբերովը կը լեցուեր:

— Սիւզանին օժիտն էր որ ինձմէ կը գողնայ, ես գիտէի որ գրասեղանը գանձ մը կը պարունակէր, կը պուար բրօֆէսէօրը:

Իրեն կ'ըսէին թէ՛ իր հակառակորդը գրասեղանը տարած ատեն՝ կ'անգիտանար վիճակահանութեան տոմսակի մը ներկայութեանը, և ամէն պարագային չէր կրնար նախատեսել՝ որ այդ տոմսակը առաջին պարգեւը պիտի չահէր:

— Խնչպէս չէր գիտէր, ինք գիտէր... ապա թէ ոչ, ատ թշուառական կարասին չէր վերցնէր:

* * *

Բայց տաճարեկներորդ օրը, Պ. Ժէռպուլար, Արսէն Լիւքէնէն ստացաւ՝ բաւական անհանգստութիւն պատճառող նամակ մը:

«Պարո՛ն, տոմսակ մը ունիմ ձեռքս որ գանձելու իրաւունք չունիմ և դուք ալ իրաւունք ունիք գանձելու տոմսակ մը որ ձեռքերնիդ չգտնուիր...»

Ուրեմն՝ առանց իրարու բան մը չենք կրնար ընել...

Ուստի, ո՛չ դուք պիտի հաւանիք ինձ թողուլ ձեր իրաւունքը, և ոչ ես ձեզի թողուլ իՄ տոմսակս...

Ինչ ընել:

Միջոց մը կը տեսնեմ, բաժնեկնք:

Կէս միլլիօն ձեզի և կէս միլլիօն ալ ինձի. անաչառ չէ՞. և աս Սողոմոնի դատաստանը չբաւեր, մեր իրաւունքները բաժնելու:

Վերջին լուծում մը՝ բայց անմիջական լուծում մը:

Երեք օր կուտամ ձեզ մտածելու համար: Ուրբաթ առաւօտ կը յուսամ թէ՛ Էֆօ քրիստի լրագրի պատիկ ծանուցումներու բաժնին մէջ պիտի կարդամ նոթ մը՝ Պ. Արս. Լիւք. ի հասցէին, ուր քողարկուած բառերով ձեր հաւանութիւնը պարունակուի, և որուն շնորհիւ տէրը պիտի ըլլաք տոմսակին, պիտի գանձէք մէկ միլլիօնը, և ինձ պիտի ղրկէք՝ հինգ հաւիւր հազար ֆրանք:

Մերժուելու պարագային, քսանը հինգ հազար ֆրանքի յաւելուածական գումար մը վար պիտի դնեմ:

Հաճեցէք ընդունիլ և այլն»:

Պ. Ժէռպուա, դայրացած, այս նամակը ազդին անդին կը ցուցնէր և ընդօրինակել կուտար: Իր սրամտութիւնը ամէն խենդութեան կը մղէր զինքը:

— Ո՛հ, բան մը չպիտի անցնի ձեռքը, պռուց լրաբերներուն, բամբակ ինչ որ ինծի կը պատկանի, ամենեւին, թող պատուէ ատմասկը եթէ կ'ուզէ:

— Սակայն հինգ հարիւր հազար ֆրանքը ոչինչէն աղէկ է:

— Ատոր վրայ չէ խնդիրը, բայց եթէ իմ իրաւունքս, և այս իրաւունքս դատարանին պիտի յանձնեմ պաշտպանութեան համար:

* * *

Ուրբաթ օրը, ձեռքէ ձեռք քաշեցին էֆօ սը Ֆրանսը և հինգերորդ էջը գտնուող փոքրիկ թղթակցութիւնները աչքէ անցուցին, ոչ իսկ տող մը՝ Պ. Արս. Լիւր. ի ուղղուած: Արսէն Լիւրէնի առաջարկին՝ Պ. Ժէռպուա լռութեամբ կը պատասխանէր: Պայքարին յայտարարութիւնն էր ատ:

Նոյն իրկունը, թերթերէն կը հասկցուեր՝ Օր. Ժէռպուաի առեւանգումը:

* * *

Սպասուհիին վկայութեանը համեմատ, Սիւզան տասնին քսան մնացած մեկնած էր տունէն՝ հօրը երթալու համար: Տասնին հայրը Լիւրէնէն ելլալուն՝ մայթին վրայ տեսած չէր իր աղջիկը, ուր սովորութիւն ունէր սպասել: Ի՞նչ եղեր էր:

Երկու դրացիներ, տունէն երեք հարիւր քայլ անդին տեսած էին զայն: Կին մը, ծառուղիին երկայնքը տեսած էր աղջիկ մը՝ որ անոնց նկարագրածին ճիշդ կը նմանէր: Եւ ետքը՝ ա՛լ բան չէին գիտեր:

Առեւանգումը՝ բազմամարդ փողոցի մը մէջ տեղի ունեցեր էր՝ առանց կասկած մը արթնցնելու. ոչ իսկ ձայն մը չէր լսուած և ոչ ալ կասկածելի շարժում մը տեսնուած:

Ամէն կողմ խուզարկեցին, կայարանի պաշտօնեաներ հարցափորձեցին. ատանկ բան մը չէր պատահած:

Սակայն, 'Լիւր-տ' Ավրայէն նպարտութեամբ մը սա յայտարարեց որ՝ Բարիդէն եկող ինքնաշարժ կառքի մը իւղ տուած էր: Ինքնաշարժին նստատեղիին վրայ մեքենաւոր մը կար և կառքին ներսը խարահալ կին մը: Ժամ մը ետքը, ինքնաշարժ կառքը Վէր-սայէն ետ կը դառնար, ուրիշ կառք մը դէմը ելլելուն առիթով՝ նպարտութեամբ այս անգամ ուրիշ կնոջ մը ներկայութիւնը նշմարեց:

Պ. Ժէռպուա, յուսահատած՝ անձնատուր եղաւ: Էֆօ սը Ֆրանսի մէջ պղտիկ ծանուցում մը երեւաց՝ որ իր յօժարութիւնը կը յայտարարէր:

* * *

Երկու օր ետքը, Պ. Ժէռպուա, Քրէտի Ծոնսիէի բակէն կ'անցնէր: Վարիչին ներկայացաւ և 23րդ. սէրիի 514 թիւ տոմսակը երկարեց:

Վարիչը այլայլած.

— Ա՛հ ձեռքերնիդ է, ըսաւ, վերադարձուցին:

— Մոլորած էի, այսչափ, պատասխանեց Պ. Ժէռպուա:

— Հրամանատարին նամակն ալ ունի՞ք:

— Ահաւասիկ:

— Շատ լաւ, հաճեցէք այդ դրամները մեր քովը սրահ ձգել: Մեզի տասնըհինգ օր տրուած է աղէկ մը ստուգելու համար: Ձեզի պիտի իմացնեմ այն օրը՝ որ կարենաք ներկայանալ մեր արկղին:

Այսպէս ահա, Արսէն Լիւրէն յանդգնութիւն ունեցած էր Պ. Ժէռպուաի զրկել 23-սէրիի 514 թիւ տոմսակը...: Այս նոր լուրը զարմացում և ապշացում սփռեց:

* * *

Յունիս օին, երեքշաբթի օրը. Պ. Ժէռպուա Քրէտի Ծոնսիէի հրաւերը ընդունեց:

Հինգշաբթի, ժամը մէկին, Բարիդ երթալու համար շողեկարդ նստաւ: Ժամը երկուքին, հազար ֆրանքնոց տոմսակներով հատուցուեցաւ իրեն:

Մինչդեռ տոմսակները կը համրէր մէկիկ դողդոջալով, դուրսը, երկու հոգի դռանը մօտը կեցած կառքի մը մէջ կը խօսէին:

(Շարունակելի)

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ


ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուլթան Համամ, Թօփաշեան խան
Պոլի վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաջ
տոկունութեամբ եւ գիներու անմոցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
գինով վաճառորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բեղուններու
եւ տղայոց շիբ եւ գիւմարներու փոքրիկ
ներու ճոխ միջերք մը պատրաստ ունի,
որ շերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից։

Սակարկութիւն չկայ, թիւը 2 դրշ. է։
Գաւառներէն յանձնարարութիւնը
փութով կը կատարուին։ 50—2



ԱՌԻԹԵՆ] 1

ՕԴՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՅԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեղք պէյ խանին
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյլանէ,
Չինաստանէ, Հնդկաստանէ, Ճապոն եւ Ճա-
րոնէ։

Ամենէն գոյաբարհաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը։

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ։

Ուշադրութիւն մարտային։

ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷՋԵՐՈՎ ԵՒ ՃՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒԱԾ

Կ. Պոլսոյ համար տարեկան բաժնեգին	50 դր.	Վեցամսեայ	25 դր.
Գաւառաց համար	» 54 »	»	27 »
Արսասանման	» 12 ֆր.	»	6 ֆր.

Կ Ա Ն Ի Ի Կ

ՀԱՍՏԷ՝

ՎԱՋԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ, Պապը-Ալի հասեքի Ասատուեան տպարան քիւ 52.

Գաւառներու մէջ գործակալներ կը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւոր մը պոյց տան եւ
թէ միշտ նոր բաժանորդներու անունին եւ հասցէին կցեն նաեւ բաժնեգինները։

Դրամները պէտք է ղրկուին կամ Օսմ. Մանուսթըսթով եւ կամ բոսթայի փութով 20 հատը
20 դրուշի հաշուով։

Ա Պ Ա Ռ Ի Կ

Ս ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԷՆ ՅԵՏՈՅ ԱՆՊԱՅՄԱՆ ԱՊԱՌԻԿ
[5000Է ԱԻԵԼԻ ՏԵՍԱԿ ԻՐԵՂԵՆՔ 5000

Տեղական և Բարիկի 14 և 18 աստիճան ոսկւոյ վրայ բազմատեսակ գոհարեղէններ, օղ, մատնի, ասեղ, եայլն. նաեւ անուններու սկզբնառով գոհարազարդ մատանիներ, ոսկի, արծաթ ժամացոյցներ և նորաձեւ շղթայներ, ասոնցմէ զատ ամէն եղանակի յատուկ պատրաստ և չափու վրայ գգեստներ, կօշիկներ ու գլխարկներ, արանց, կանանց և տղայոց համար : Նաեւ մուշամպա, վերարկուներ, բուրդէ և մետաքսէ չրջագգեստի կերպասներ, պատրաստ ճերմակեղէններ նաեւ խասա, ամերիգան, պատմա, եւայլն. և զարդի վերաբերեալ պիտոյք, մեքենաներ՝ լուացքի, լուսանկարի, կրամֆօն, ինչպէս նաեւ կարի ձօնս. Նովման) եայլն :

Ունինք նաեւ եւրոպական նուրբ ճաշակով պատրաստուած կահ կարասիք, հիւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի և խոհանոցի վերաբերեալ ամէն իրեղէնք, ամէն տեսակ վառարաններ, նաեւ բազմաբիւր, խոհանոցի եւրոպական չարժու օճախ և լն. :

Վաճառատունս իր տեսակին մէջ միակն է որ չահած է հանրութեան վստահութիւնը, գնահատուած է նաեւ իր ապրանաց տոկունութիւնը, նրբութիւնը և աժաւորութիւնը :

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Կանխիկ գնողներու համար հարկւրին 5 զեղչ

Շաբաթական և ամսական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են :

Հաճեցէք դիմել ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՇ ԹԻԻ 13

50—44

ՓԱԼԱԳԱՇԵԱՆ
ԱՂԶԿԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ
ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ
ԳԻՇԵՐՈՐԹԻԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՅ
Կ. Պոլիս, Գասը-գիւղ, Մեօհիւրսար
նաւստիսի .

Ծրդ Տարեօրացի

Մասնագէտ ուսուցիչներու և ուսուցչուհիներու ձեռամբ, տոմային ուսումներէ և գիտական անհրաժեշտ ծանօթութիւններէ զատ, հիմնական կերպով կ'աւանդուին Հայերէն, Օսմաներէն, Ֆրանսերէն, Անգղիերէն և Գերմաներէն լեզուները՝ հանդերձ խօ-

սեղավարժութեամբ (բուքիֆ), ինչպէս նաեւ Գիծագրութիւն, Տնարարութիւն, Կար ու Ձեւ, Ասեղնագործութեան զանազան տեսակները (ձեռքով և մեքենայով), ձայնական և գործիական երաժշտութիւն, մասնաւորապէս Դաշնակ և Ջութակ : Գիշերօթիկները կը վայելին կատարեալ սնունդ և ընտանեկան անթերի խնամք, առողջապահիկ պայմաններու մէջ :

Բանակցութեան համար դիմել ի վարժարան առ Տեօուչն կամ առ Տեօուհիս : Մանրամասն տեղեկութիւն կարելի է ստանալ նաեւ, Դշ. Եշ. Շբ. օրերը ժամը 5 էն 9 զիմուով ի Գրատուն «ԳԱՐՈՒՆ», Մեծ Նոր խան, վերի յարկ, թիւ 55 :

Աշակերտուհեաց վերամուտը տեղի պիտի ունենայ Սեպտ. 3, Բշ. օր :

Հիմնադիր-ՏԵՐԵՆ

Յ. Դ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ